սուբյեկտիվ իրավունքների խախտում: Վերոգյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ Երևանի քաղաքապետարանի հայտարարված հրատապ բաց մրցույթի ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 ծածկագրով ընթացակարգի 19.03.2024թ. կայացված թիվ 7 արձանագրության 1.2 կետն անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ամփոփելով վերոգրյալը՝ Դատարանը եզրահանգում է, որ հայցը թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 ծածկագրով գնման գործընթացի շրջանակում ենթակա է մերժման:

Անդրադառնալով սույն գործով դատական ծախսերի բաշխման հարցին, հաշվի առնելով, որ հայցվորը նախապես վճարել է պետական տուրքի գումարը, իսկ դատական այլ ծախսեր սույն գործով առկա չեն՝ Դատարանը դատական ծախսերի բաշխման հարցը համարում է լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ, 101-րդ, 109-րդ, 189-րդ, 191-րդ, 192-րդ, 198-րդ, 303-րդ, 360-րդ և 362-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. Մերժել «ԱԳՐՈԹԵՔԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի՝ թիվ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 ծածկագրով ընթացակարգի 04.01.2024թ. կայացված N 5 արձանագրությունը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասին:

2. Մերժել «ԱԳՐՈԹԵՔԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի՝ «Ագրոթեքինվեստ» ՍՊԸ-ին Երևանի քաղաքապետարանի հայտարարված հրատապ բաց մրցույթի ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 ծածկագրի ընթացակարգով հայտի ապահովման վճարումից ազատված ճանաչելու պահանջի մասին:

3. Մերժել «ԱԳՐՈԹԵՔԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի, երրորդ անձ՝ «Սիսիանի հաց» ՍՊԸ-ի՝ Երևանի քաղաքապետարանի հայտարարված հրատապ բաց մրցույթի ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-24/1 ծածկագրով ընթացակարգի 19.03.2024թ. կայացված թիվ 7 արձանագրության 1.2 կետը անվավեր ճանաչելու պահանջի մասին:

4. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Վճիռն ուժի մեջ է մտնում հրապարակելու օրվանից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am